ՀՏԴ 725.182(479.25) ՃԱՐՏԱՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

ՊԱՏՄԱԿԱՆ ՌԱԶՄԱԿԱՆ ԿԱՌՈՒՑՑՆԵՐԻ ՀԱՐՄԱՐԵՑՎԱԾ ՎԵՐԱՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ՏԵՍԱԿԱՆ ՀԻՄՔԵՐԸ

Վահրամ Արմենի Կիրակոսյան
Ճարտարապետության և շինարարության Հայաստանի ազգային համալսարան, ք.Երևան, ՀՀ
vahramkirakosyan@gmail.com

Պատմական շենքերի պահպանումը կարևոր է, քանի որ դրանք անցյալի սոցիալ-մշակութային վկայությունն են: Իրենց կյանքի ընթացքում պատմական շենքերը կարող են կորցնել գործառույթը և լքվել: Հարմարեցված վերաօգտագործումը պատմական շենքի գոյատևման ճանապարհ է՝ իր տարածաշրջանի պահանջներին համապատասխան գործառույթը փոխելով: Ուսումնասիրության նպատակն է՝ դիտարկել հարմարեցված վերաօգտագործման նախագծերի հաջողությունը ռազմական հաստատություններում թանգարանային գործառույթի նպատակահարմարության առումով, ինչպես պահպանման, այնպես էլ թանգարանագիտության տեսանկյունից:

Առանցքային բառեր. *պահպանություն, վերականգնում, հարմարեցված վերաօգտագործում, պաշտպանական ժառանգություն, թանգարանագրություն, հարմարեցում*

Ներածություն

Պատմական շենքերը գեղագիտական, մշակութային և տնտեսական առումով որոշիչ ռեսուրսներ են: Շենքերի վերաօգտագործումը և այսօրվա պահանջներին հարմարեցումը դարձել են կառուցապատվող միջավայրում աճող միտում: Վերաօգտագործման միջոցով շենքի կյանքի երկարացումը կարող է նվազեցնել նյութական, տրանսպորտային, էներգետիկ ծախսերը և շրջակա միջավայրի աղտոտումը: Սա կարող է նշանակալի ներդրում դառնալ կայուն զարգացում ապահովելու առումով [1]:

Մյուս կողմից, ժառանգության պահպանումը քաղաքային համայնքներին ապահովում է տնտեսական, մշակութային և սոցիալական օգուտներ: Շենքի պահպանության խնդիրը վերածվել է քաղաքի վերափոխման և կայուն զարգացման մի մաս [2]: Համաձայն [3]-ի՝ «ժառանգության շենքերն անցյալի արժեքավոր ծանուցումն են և բնութագրում են համայնքներին և, հետևաբար, պետք է պահպանվեն ապագա սերունդների համար»:

Տեսական նախադրյալները

Շենքերի ավելորդ դառնալուն կան պատճառներ, պայմանավորված տնտեսական և արդյունաբերական գործունեության փոփոխություններով, ժողովրդագրական տեղաշարժերով, պահպանման կամ սպասարկման ծախսերի բարձրացմամբ և, առաջին հերթին, այն պատճառով, որ դրանք այլևս պիտանի չեն այն գործառնության համար, որով օգտագործվում էին և նոր կենսունակ գործառույթը դեռ չի որոշվել [4]: Հարմարեցված վերաօգտագործումն այս

շենքերը կրկին կյանքի կոչելու մեթոդ է: Ըստ [3]-ի հարմարեցված վերաօգտագործումը ահմանվում է որպես «գործընթաց, որը փոխում է օգտագործված կամ անարդյունավետ տարրը նոր տարրի, որը կարող է կիրառվել այլ նպատակներով»: Այն հաճախ բնութագրվում է որպես «գործընթաց, որի միջոցով կառուցվածքային հին շենքերը մշակվում են տնտեսապես կենսունակ նոր օգտագործման համար [5]»:

Սովորաբար շենքերը կյանքի ընթացքում փոխում են իրենց գործառույթը: Նոր գործառույթի տեղակայման համար շենքում փոփոխություններ կատարելը հաճախ ճարտարապետական ժառանգության շարունակական օգտակարությունն ապահովելու միջոց է: Այնուամենայնիվ, պետք է հաշվի առնել նոր գործառույթի պատշաճությունը պատմական շենքում [4]:

Գոյություն ունեցող պատմական շենքի հարմարեցումը ժամանակի պահանջներին՝ դա նոր գործառույթներին վերափոխելու գործընթաց է [6]: Այս վերափոխումները կարող են տարբեր լինել այս կամ այն դեպքի համար: Ինչպես նշվում է [7]-ում. «Սա նշանակում է ցանկացած միջամտություն, որն ավելին է, քան սպասարկումը, փոխում է իր կարողությունները, գործառույթը կամ բնութագրիչը»: Այն ներառում է՝ փոփոխություն, պահպանություն, ընդլայնում և վերանորոգում, վերազինում:

Պահպանություն

Բուրրայի հրովարտակը [8] սահմանում է պահպանությունը որպես «Օբյեկտի մասին հետևելու այն բոլոր գործընթացները, որոնք ապահովում են դրա մշակութային նշանակությունը: Սա ներառում է սպասարկում և կարող է ըստ հանգամանքների ներառել ամրակայում, վերականգնում, պահպանում, վերանորոգում և հարմարեցում կամ դրանցից մի քանիսի համատեղում»: Պահպանությունը՝ պատմական շենքերի պաշտպանության, մշակութային նշանակության պահպանման, փոխըմբռնման և անհրաժեշտության դեպքում՝ սպասարկման, վերանորոգման, վերակառուցման և հարմարեցման գործընթաց է [4]: Այնուամենայնիվ, պահպանության ըմբռնումը փոխվել է նախորդ հասկացություն համեմատ: Ժամանակակից պահպանության հայեցակարգն այսօր ավելի բարդ գործողություն է: Ընդամենը մի քանի տասնամյակ առաջ սա ավելի պարզ գործընթաց էր [9]: Այսօրվա պահպանությունը բնորոշվում է արդի հասարակությունում արժեքների հիմնարար փոփոխությամբ [10]: Վերջին տասնամյակներում մարդիկ ավելի շատ են գիտակցում մարդկային արժեքների միասնությունը և հին հուշարձանները համարում են համընդհանուր ժառանգություն, ավելին, գիտակցվում է ապագա սերունդների համար դրանց պահպանման պատասխանատվությունը: Մեր պարտքն է պահպանել իրենց վավերականությունը [11]: Ժամանակակից պահպանումը չի նշանակում ճարտարապետական ժառանգությաուն վերադարձ դեպի անցյալ: Այն պահանջում է հաստատակամություն կայուն մարդկային զարգացման իրականությունում և առկա մշակութային, ֆիզիկական և բնապահպանական ռեսուրսների ներուժի համախմբում [10]:

Կան միջազգային հրովարտակներ և ստանդարտներ, որոնք հասարակությանն առաջնորդում են պահպանման և հարմարեցման գործընթացում: Դրանք սահմանում են պատմական շենքերի պահպանության չափանիշները, փոփոխությունների ու միջամտությունների աստիճանը: Վենետիկյան Հրովարտակը [10] կարևորագույններից մեկն է, ուր առկա է պատմական շենքերի նոր հավելումներին նվիրված երկու հոդված. Հոդված 5-ը նշում է, որ «հուշարձանների պահպանությունը մշտապես նպաստում է դրանց օգտագործմանը որոշակի սոցիալապես օգտակար նպատակների համար: Ուստի, այդպիսի օգտագործումը ցանկալի է, բայց այն չպետք է փոխի շենքը: Միայն այս սահմաններում պետք է նախատեսվեն և թույլատրվեն գործառույթով պահանջվող փոփոխությունները»:

Բուրրայի հրովարտակում, որը ևս մեկ կարևորագույններից է, սահմանվում է հետևյալը. «Պահպանումը հիմնված է գոյություն ունեցող կառուցվածքի նկատմամբ հարգանքի վրա և պետք է ներգրավի հնարավորինս նվազագույն ֆիզիկական միջամտություն: Այն չպետք է աղավաղի կառուցվածքի կողմից տրամադրված ապացույցները: Հավելումների, փոփոխությունների հետքերը դրա պատմության և օգտագործման վկայությունն են: Պահպանման գործողությունները պետք է ձգտեն աջակցել, այլ ոչ թե խոչընդոտել դրանց մեկնաբանումը: Նոր շինարարական աշխատանքները կարող են ընդունելի լինել վայրի մշակութային նշանակությունը չնվազեցնելու կամ քողարկելու պայմանով»:

Մյուս կողմից, Վերականգնման Ներքին Ստանդարտների Քարտուղարը (The Secretary of the Interior's Standards for Rehabilitation) նշում է. «Նոր լրացումները, արտաքին փոփոխությունները կամ հարակից նոր շինարարությունը չպետք է ոչնչացնեն պատմական նյութերը, որոնք բնութագրում են օբյեկտը: Նոր աշխատանքը պետք է տարբերակվի հնից և համապատասխանի՝ չափով, մասշտաբով և ճարտարապետական բնութագրերով, որպեսզի պահպանի գույքի և միջավայրի պատմական ամբողջականությունը»:

Թանգարանագրություն

Քսանմեկերորդ դարում թանգարանի ստեղծումը դժվար, ստեղծագործ, բարդ և հավաքական աշխատանք է: Սա նաև հարաբերում է բազմաթիվ մասնագիտական գործընթացների՝ խնամքից մինչև դիզայն և ճարտարապետությունից մինչև թատրոն և ֆիլմեր: Այսօր թանգարանի նախագիծը բազմամասնագիտական, բազմակողմանի և այնքան բարդ է, որքան բազմազան են ցուցահանդեսները [12]:

Թանգարանային դիզայնում առկա է երկու կարևոր տերմինաբանություն՝ թանգարանագիտություն և թանգարագրություն (museology and museography): Այս տերմինները հաճախ շփոթում են միմյանց հետ: «Թանգարանագիտությունը» լայնորեն օգտագործվում է որպես հղում տեսական հետազոտության գաղափարներին: «Թանգարանագրությունը» թանգարանագիտության գործնական բաղադրիչն է [13]: Թանգարանային դաշտի քննադատական և տեսական ուսումնասիրությունը թանգարանագիտությունն է, իսկ դրա գործնական տեսակետները՝ բնութագրում է թանգարանագրությունը:

Թանգարանագիտությունը կարող է սահմանվել որպես թանգարանների պատմության և հիմնարար փիլիսոփայության, նպատակների, կրթական, քաղաքական կամ հասարակական դերակատարության ուսումնասիրություն [14]: Մյուս կողմից, թանգարանագրությունը մի դաշտ է, որը հիմնովին նպաստում է շարժական մշակութային ժառանգության զգալի մասի հավաքագրմանը, պահպանմանը և պաշտպանությանը: Թանգարանագրությունը հիմնականում վերաբերում է թանգարանների գործնական տեսակետներին, ինչպիսիք են՝ թանգարանի հասանելությունը, մարդկային հոսքերը, արվեստի նմուշների ցուցադրությունը, թանգարանի լուսավորության խնդիրները, կլիմայի հսկողությունը, հավաքածուի անվտանգությունը:

Պահպանությունն ընդդեմ թանգարանագրության

Թանգարանում ցուցադրության, մարդկային հոսքերի կամ լուսավորության կազմակերպման տեսակետները կարևոր են հաջող ցուցահանդեսի նախագծման համար: Բացի այդ, երբ թանգարանը գտնվում է ճարտարապետական ժառանգության շինությունում, այս իրավիճակը կարող է ավելի մեծ մարտահրավերներ առաջացնել ինչպես նախագծողի, այնպես էլ թանգարանագետների համար, քանի որ պետք է հաշվի առնվեն պահպանման և թանգարանագիտության խնդիրները:

Ռազմական հաստատությունները հիմնականում կառուցվել են պաշտպանական նպատակով, ներառյալ ամրոցները և ռազմական բազաները, այնպես որ շինարարության պատճառը նմանատիպ հատկանիշներ է ստեղծում ռազմական շենքերի միջև, ինչպիսիք են պարփակ կազմակերպվածությունը և ամուր ճակատները: Այս պատճառով, ընդհանուր առմամբ, ամրոցները գերադասելի է փոխակերպել թանգարանների:

Չնայած թանգարանային գործառույթներն ամրոցների համար հարմար են, պահպանության և թանգարանգրության բազմաթիվ տեսակետներ կան, որոնք ստեղծում են մարտահրավերներ նախագծողի համար: Ճարտարապետական ժառանգության հարմարեցման գործընթացում կարող է առաջանալ հակասություն պահպանության և թանգարանագրության հասկացությունների միջև: Այս տեսակետերը սահմանված են աղյուսակում:

Թանգարան նախագծելը պարզ խնդիր չէ: Բացի այդ, երբ թանգարանը գտնվում է պատմական շենքում, մարտահրավերները կրկնապատկվում են, քանի որ թանգարանգրության տեսակետները պետք է համադրվեն պահպանման տեսակետների հետ:

Թանգարանում ամենակարևոր տեսակետներից մեկը հասանելիությունն է: Մուտքը և քաղաքից հասանելիությունը պետք է լինի լավ հստակեցված: Ցուցահանդեսներում մարդկային հոսքերի ուղիները պետք է լավ մշակված լինեն. մյուս կողմից, պետք է ապահովվի արվեստի նմուշների պաշտպանությունը: Ցուցանմուշների համար պետք է օգտագործվի բնական կամ արհեստական լուսավորություն. սակայն բնական լուսավորությունը չպետք է անմիջականորեն արտացոլվի արվեստի նմուշների վրա, որպեսզի չվնասի դրանց: Ցուցահանմուշների պահպանության համար անհրաժեշտ է նաև սենյակային ճիշտ ջերմաստիճան, խոնավություն և այլն:

Պահպանությունն ընդդեմ թանգարանագրության

ԹԱՆԳԱՐԱՆԱԳՐՈՒԹՅԱՆ ԵՎ ՊԱՀՊԱՆՈՒԹՅԱՆ ՏԵՍԱԿԵՏՆԵՐԸ	
ԹԱՆԳԱՐԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ	ՊԱՀՊԱՆՈՒԹՅՈՒՆ
Մատչելիություն	Տեղակայումը և ինտեգրումը քաղաքի հետ
Շրջանառություն	Նոր գործառույթի նպատակահարմարությունը
Ցուցահանդեսի կազմակերպում	Հարգանք շենքերի պատմության նկատմամբ
Թանգարանի լուսավորության տեսակետներ	Հարգանքը շենքի ինքնատիպությանը
Կլիմայի վերահսկում	Լրացումների հակադարձելիություն
Հավաքածուի անվտանգություն	Լրացումների հստակություն
Ճկունություն՝ ժամանակավոր ցուցահանդեսների հանդեպ	Համապատասխան նյութերի օգտագործում

Մյուս կողմից, շենքը պետք է ինտեգրվի քաղաքին: Հաջողությամբ հարմարվելու համար ժառանգության շենքը չպետք է ընդունվի որպես առանձին օբյեկտ, պետք է հաշվի առնվի դրա շրջապատը և հարևանությունը: Շենքի նոր գործառույթը պետք է չվնասի ճարտարապետական ժառանգությունը: Նոր միջամտությունները պետք է հարգեն շենքի պատմությունը և ինքնատիպությունը: Ինչպես նշված է տարբեր հրովարտակներում, նոր լրացումները պետք է լինեն անդրադարձելի և տարբերվող: Շինության վավերականությունը պահպանելու համար պետք է կիրառվեն համապատասխան նյութեր:

Ռազմական հաստատությունների վերաօգտագործում

Ըստ [15]-ի ռազմական հաստատությունները բաժանվում են երկու խմբի՝ ամրոցներ և ռազմաբազաներ: Ամրոցները հուշարձաններ են, որոնք պետք է պահպանվեն, քանի որ դրանք ներկայացնում են ինքնության զգացում, ազգային հպարտություն: Այս հուշարձանները պահպանելու միակ ձևը գործառույթի փոփոխությունն է, քանի որ դրանք արդեն իսկ կորցրել են սկզբնական գործառույթը: Այնուամենայնիվ, խնդիրը հուշարձանների կառուցվածքային և նախկին բնութագրիչներին համապատասխան գործառույթի ընտրությունն է:

Օգտագործված կամ վերջերս զբաղեցրած ամրոցների պարագայում դրանց օգտագործման մեջ շարունակականություն կա, շենքի կառուցվածքը հանդես է գալիս, որպես թանգարանային ֆոն, հավելվելով պահպանելու և ցուցադրելու նմուշների լայն շրջանակով: Այնուամենայնիվ, գոյություն ունի հակասություն՝ բնօրինակի կառուցվածքի պահպանման և նրա հետագա միջամտությունների միջև [15]:

Այլ ռազմական հաստատություններ են ռազմաբազաները, որոնք օգտագործվում են անվտանգության նկատառումներով: Այս կառույցները հիմնականում հիացմունքի արժանի և եզակի շենքեր չեն, ինչպիսիք ամրոցներ են, սակայն խորհրդանշում են խոշոր հակամարտությունները: Ռազմաբազաները հիմնականում հսկայական համալիրներ են, որոնք ներառում են աշխատանքային հաստատություններ, հազարավոր աշխատակիցների

կացարաններ այն բոլոր աջակից հարմարություններով, որոնք կարելի է գտնել մի փոքրիկ քաղաքային համայնքում: Այսքան մեծ կառուցվածքների վերաօգտագործումը պահանջում է ոչ թե շենքի քննություն, այլ միասնական մոտեցում [15]:

Եզրակացություն

Ճարտարապետական ժառանգության հարմարեցումը բարդ գործընթաց է: Շենքի արժեքները, ֆիզիկական բնութագրերը և ներուժը պետք է լավ վերլուծվեն: Ամրոցներն իրենց ֆիզիկական բնութագրերի շնորհիվ կարող են նոր կյանք ստանալ՝ վերածվելով թանգարանների: Ամրոցները սովորաբար կառուցվում են պաշտպանական նպատակներով, հետևաբար ճակատներն ամուր են, սահմանափակ բացվածքներով, հատակագիծն ունի պարփակ կազմակերպվածություն, հաճախ կենտրոնում ներքին բակով: Թեև թանգարանային ֆունկցիան ֆիզիկապես ամրոցների համար համապատասխանում է, պահպանության և թանգարագրության տեսակետները պետք է դիտարկվեն համատեղ:

Պատմական շենքում թանգարանի հաջողությունը դիտարկելու համար բավարար չէ գնահատել այն ելնելով միայն պահպանման սկզբունքներից: Թանգարանագրությանը վերաբերող խնդիրները նույնպես կարևոր են՝ շենքի առաջարկվող գործառույթը պահպանելու համար: Լուծումները կախված են նախագծողի ստեղծարարությունից, սակայն ճիշտ մոտեցումը նախագծողի և թանգարանագետի համագործակցությունն է:

ТЕОРЕТИЧЕСКИЕ ОСНОВЫ АДАПТИВНОГО ПОВТОРНОГО ИСПОЛЬЗОВАНИЯ ИСТОРИЧЕСКИХ ВОЕННЫХ СООРУЖЕНИЙ

Ваграм Арменович Киракосян
Национальный университет архитектуры и строительства Армении, г. Ереван, РА
vahramkirakosyan@gmail.com

Сохранение исторических зданий важно, поскольку они являются социально-культурными свидетельствами прошлого. В течение времени исторические здания могут потерять свою изначальную функцию и стать заброшенными. Адаптивное повторное использование - способ, позволяющий историческому зданию выжить, путем изменения функции в соответствии с потребностями своего региона. Исследование направлено на изучение успешности проектов адаптивного повторного использования с точки зрения целесообразности музейной функции в военных учреждениях как с точки зрения сохранения, так и с точки зрения музеографии.

Ключевые слова: *сохранение, восстановление, адаптивное повторное использование, оборонное наследие, музеография, адаптация*

THEORETICAL BASIS OF ADAPTIVE REUSE OF HISTORICAL MILITARY ESTABLISHMENTS

Vahram Kirakosyan
National University of Architecture and Construction of Armenia, Yerevan, RA
vahramkirakosyan@gmail.com

The preservation of historic buildings is important since they are social and cultural evidence of the past. In their lifetime, historic buildings may lose their function and become abandoned. Adaptive reuse is a

way for a historic building to survive by changing the function according to the needs of its region. The aim of the study is to question the success of the adaptive reuse projects in terms of appropriateness of the museum function in a military establishment both in a conservation approach and museography approach.
Keywords: *conservation, restoration, adaptive reuse, defence heritage, museography, adaptation*

Գրականություն

1. **Bullen P.A., Love P.E.D.** Residential regeneration and adaptive reuse: learning from the experiences of Los Angeles // Structural Survey. – 2009. - Vol. 27, No. 5. - P. 351-360.
2. **Bullen P.A., Love P.E.D.** Adaptive reuse of heritage buildings // Structural Survey. – 2011. - Vol.29, Iss. 5. -P. 411–421.
3. **DEH** Adaptive reuse: Preserving our past, building our future. ACT: Department of Environment and Heritage, Commonwealth of Australia, 2004.
4. **Orbaşlı A.** Architectural Conservation. - London: Blackwell Publishing, 2008.
5. **Austin R.L**. Adaptive Reuse: Issues and Case Studies in Building Preservation. - New York: Van Nostrand Reinhold Company, 1988.
6. **Brooker G., Stone S.** Context and Environment. – Switzerland: Ava Publishing, 2008.
7. **Douglas J.** Building Adaptation. – London: Butterworth-Heinemann Publishing, 2006.
8. **Australia ICOMOS**, Burra Charter, The Charter for Places of Cultural Significance [online]. - Available at: http://australia.icomos.org/wpcontent/uploads/BURRA_CHARTER.pdf (Accessed in December 2017).
9. **Vinas S.M.** Contemporary Theory of Conservation. – Oxford: Elsevier Butterworth-Heinemann, 2005.
10. **Jokilehto J.** A History of Architectural Conservation. - Italy, ICCROM, 1999.
11. **ICOMOS**, Venice Charter, International charter for the conservation and restoration of monuments and sites. - Available at: http://www.icomos.org/charters/venice_e.pdf (Accessed in December 2017).
12. **Macleod S., Hanks L.H., Hale J.** Museum making: Narratives, Architectures, Exhibitions. – London: Routledge, 2012.
13. **Grewcock D.** Doing Museology Differently. - London: Routledge, 2013.
14. **Vergo P.** New Museology. - London: Reaktion, 1989.
15. **Latham D.** Creative re-use of buildings. Vol.II. - London: Donhead Publishing, 2000.

Կիրակոսյան Վահրամ Արմենի *(ՀՀ, ք.Երևան) – ՃՇՀԱՀ, Ճարտարապետության տեսության, պատմաճարտարապետական ժառանգության վերականգնման և վերակառուցման, գեղեցիկ արվեստի և պատմության ամբիոն, ասպիրանտ, (+374) 77634521, vahramkirakosyan@gmail.com*
Киракосян Ваграм Арменович *(РА, г.Ереван) - НУАСА, кафедра Теории архитектуры, реставрации и реконструкции историко-архитектурного наследия, изящных искусств и истории, аспирант, (+374)77634521, vahramkirakosyan@gmail.com*
Kirakosyan Vahram *(RA, Yerevan) – NUACA, chair of Theory of Architecture, Restoration and Reconstruction of Historical Architecure Heritage, Fine Art and History, postgraduate student, (+374) 77634521, vahramkirakosyan@gmail.com*

Ներկայացվել է՝ 07.02.2018թ.
Ընդունվել է տպագրության՝ 15.02.2018թ.